Հաշվետվություն

2024 թվականի հուլիսի 2-4-ը Բելգիայի Թագավորություն,
(Բրյուսել) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Սուրեն Թովմասյան, Կադաստրի կոմիտեի ղեկավար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Բելգիայի Թագավորություն, Բրյուսել, 2024 թվականի հուլիսի 2-4-ը

3. **Հրավիրող կողմը.**
   «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիա

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի կառավարման խորհրդի նիստին

5. **Քննարկված թեմաները.**
   Նիստի ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները.
   - կառավարման խորհրդի նշանակությունը և պարտականությունները,
   - վերջին հանդիպման արձանագրությունը և գործողությունների մատյանների վերանայումը,
   - «Բաց (հասանելի) քարտեզներ Եվրոպայի համար 2» (OME2) ծրագրի գործառնական թարմացում՝ ներառյալ. հիմնական կատարողական ցուցանիշները (KPIs), 2024 թվականի գլխավոր ասամբլեայի արդյունքների ամփոփում,
   - 2025 թվականի գլխավոր ասամբլեայի շրջանակներում իրականացվող նախապատրաստական աշխատանքներ,
   - «Բաց (հասանելի) քարտեզներ Եվրոպայի համար 2» (OME2) ծրագրի արդյունքները,
   - ռիսկերի գրանցամատյան,
   - ֆինանսներ, ֆինանսական հաշվետվություն, 2024 թվականի վերանայված բյուջե,
   - կայուն զարգացում,
   - անդամակցության կայունության ռազմավարություն,
   - ռազմավարական փոխհարաբերությունները Եվրոգեոգրաֆիքս ասոցիացիայի և

ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման հարցերով փորձագետների Եվրոպայի տարածաշրջանային կոմիտեի (UN-GGIM: Europe) միջև:

6. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**

Հաստատվեց Եվրոգեոգրաֆիքս ասոցիացիայի կառավարման խորհրդի հերթական նիստի օրակարգը, որի համաձայն ներկայացվեց կառավարման խորհրդի դերն ու պարտականությունները, վերջին հանդիպման արձանագրությունը և գործողությունների մատյանների վերանայումը, «Բաց (հասանելի) քարտեզներ Եվրոպայի համար 2» (OME2) ծրագրի գործառնական թարմացումը՝ ներառյալ հիմնական կատարողական ցուցանիշները (KPIs): Ամփոփվեց 2024 թվականի գլխավոր ասամբլեայի արդյունքները, քննարկվեց 2025 թվականի գլխավոր ասամբլեայի շրջանակներում իրականացվող նախապատրաստական աշխատանքների ընթացքը, կարևորվեց «Բաց (հասանելի) քարտեզներ Եվրոպայի համար 2» (OME2) ծրագրի արդյունքները, այնուհետև քննարկվեց ռիսկերի գրանցամատյանը, ֆինանսական հաշվետվությունը, 2024 թվականի վերանայված բյուջեն, կայուն զարգացումը, անդամակցության կայունության ռազմավարությունը, մանրամասն ներկայացվեց Եվրոգեոգրաֆիքս ասոցիացիայի և ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման հարցերով փորձագետների Եվրոպայի տարածաշրջանային կոմիտեի (UN-GGIM: Europe) միջև ռազմավարական փոխհարաբերությունները:

Անդրադարձ կատարվեց ասոցիացիայի ընդհանուր գործունեությանն առնչվող հարցերին, մասնավորապես կարևորվեց նոր անդամների ներգրավման, ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման, ֆինանսական կորուստների կանխատեսման, ռեսուրսների ճիշտ օգտագործման, ինչպես նաև գիտելիքների փոխանակման վերաբերյալ հարցերը: Քննարկում տեղի ունեցավ ասոցիացիայի անդամակցության ռազմավարության վերաբերյալ, որի ընթացքում առաջարկվեց անդամակցության նոր մոդելի ներդրում, հատկապես անդամակցությունը ազգային քարտեզագրման և կադաստրային գործակալությունների աշխարհագրական Եվրոպայի սահմաններից դուրս դիտարկումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օգտատերերի կողմից միշտ հետաքրքրություն կա Եվրոպայից դուրս գտնվող կամ Միջերկրական ծովին սահմանակից երկրների տվյալների նկատմամբ, ընդլայնելու անդամակցության շրջանակը՝ ներառելով իրենց երկրի ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքների համար պատասխանատու կազմակերպություններ, թույլատրել երկրներին ունենալ երեքից ավելի լիիրավ անդամներ, դիտարկել տարածաշրջանային անդամակցությունը, ինչպես նաև հաշվի առնել անդամակցության նոր կատեգորիաների ավելացում, ինչպիսիք են՝

- միկրոպետությունների կատեգորիան,
- դիտորդների կատեգորիան,
- ասոցացված անդամակցության վերասահմանում՝ յուրաքանչյուր երկրում ավելի շատ ասոցացված անդամներ ապահովելու համար,
- ռազմական/պաշտպանական քարտեզագրման մարմինների ներառում:

Շեշտվեց անդամակցության առավելությունների մատուցման, ներառյալ անդամների միջև կայացած վեբինար ծրագրերը, որը շարունակում է զգալի ներգրավման հնարավորություններ ապահովել մասնակիցների համար:

Նշվեց, որ զգալի աշխատանք է կատարվել ոչ ակտիվ անդամների հետ, կրկին ներգրավվելու միջոցով ավելացել է շփումները և անհատական հանդիպումները:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Պայմանավորվածություն ձեռք բերվեց 2024 թվականի սեպտեմբերի 19-ին անցկացնել կառավարման խորհրդի առցանց հանդիպում, իսկ դեկտեմբերի 3-5-ը Բրյուսելում անցկացնել կառավարման խորհրդի հերթական հանդիպումը Եվրոգեոգրաֆիքսի կենտրոնական գրասենյակի թիմի և ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման հարցերով փորձագետների Եվրոպայի տարածաշրջանային կոմիտեի մասնակցությամբ:

Կառավարման խորհրդի շրջանակներում քննարկվեց ասոցիացիայի անդամավճարի բարձրացման հարցը՝ սահմանելով հետևյալ կատեգորիաները. ասոցացված/դիտորդ - 10,000 եվրո, լիիրավ անդամության խումբ 1- 12,000 եվրո, լիիրավ անդամության խումբ 2 - 20,000 եվրո, լիիրավ անդամության խումբ 3 - 30,000 եվրո, լիիրավ անդամության խումբ 4- 60,000 եվրո: Ներկայիս բաժանորդագրության մոդելը հիմնված է բոլոր անդամների կողմից վճարվող ֆիքսված վճարի և փոփոխական վճարի վրա և հաշվի է առնված երկրի ՀՆԱ-ն, որը գործում է 2000 թվականից:

Բաժանորդագրությունների վերաորակավորումը նախատեսվում է 2026 թվականին, որը պետք է իրականացվի 2027 թվականին:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Քննարկման ընթացքում մատնանշել եմ ոչ ԵՄ անդամ երկրների դերը ռազմավարության մեջ, մասնավորապես հնարավոր ակնկալվող օգուտները ոչ ԵՄ անդամ երկրների համար:

Այնուհետև ներկայացրել եմ «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը, պայմանավորվածություն է ձեռք բերվել այն էլեկտրոնային փոստի միջոցով փոխանցել Եվրոգեոգրաֆիքս ասոցիացիային՝ հետագայում տարածական տվյալների ինտեգրմանը խթանելու նպատակով:

9.Ստորագրությունը, ամսաթիվը:

Սուրեն Թովմասյան

09.07.2024 թ.

Հավելված N 2 ՀՀ վարչապետի N 326-Ն որոշման
Հավելված N 3 ՀՀ վարչապետի N 1230-Ն որոշման

Հաշվետվություն
Գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին

1 Մարմնի անվանումը Կադաստրի կոմիտե

2 Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ Վարչապետի Որոշում 07.06.2024թ. N 541-Ա

3 Անուն, Ազգանուն, զբաղեցրած պաշտոն Սուրեն Թովմասյան Կադաստրի կոմիտեի ղեկավար

4 Գործուղման վայրը Բելգիայի Թագավորություն, քաղաք Բրյուսել

5 Գործուղման ժամկետները 02.07.2024-04.07.2024թթ.

6 Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը(Կադաստրի կոմիտեի 2024 թվականի (ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

1. ճանապարհածախս, 2. գիշերավարձ, 3. օրապահիկ

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)
		Սուրեն Թովմասյան	
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը էկոնոմ դաս		
	Ավիաճառայության արժեք (դրամ)		-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) ԵՎՐ		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-
	Օրերի քանակ		
	Ընդամենը (դրամ)	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) ԵՎՐ	126	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	52,468.9	52.47
	Օրերի քանակ	3	
	Ընդամենը (դրամ)	157,406.8	157.41
Ընդամենը ծախսեր (դրամ)			157.41

Գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյան

Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ/
գլխավոր հաշվապահ Գևորգ Սարդարյան
09.07.2024թ.